


ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԴԱՐՏԵՐԸ

PRESIDENT WILSON'S
Map of
ARMENIAN BOUNDARIES



ՀՏԴ 941(479.25) : 528

ԳՄԴ 63.3(2Հ) + 26.1

Խ 288

Նվիրվում է Սևրի հաշտության պայմանագրի
ստորագման 90-րդ տարելիցին

Խ 288

Խաչիկյան Արմեն

Նախագահ Վիլսոնի Հայաստանի քարտեզը/Արմեն

Խաչիկյան .- Նր.: Էդիթ Պրինտ, 2010, 64 էջ:

1920թ. նոյեմբերի 22-ին, ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնն ավարտեց
Սևրի դաշնագրով նախատեսված և Անուրարնի տերությունների
կողմից իրեն հանձնարարված Թուրքիայի ու Հայաստանի Հանրա-
պետության միջև սահմանագծման քարտեզագրումը:

Ընթերցողին ենք ներկայացնում Վիլսոնի կողմից կատարված
սահմանագծման տեքստի և նման սահմանագծումը հիմնավորող նա-
մակի հայերեն քարտեզագրությունը:

Այս փաստաթղթերը, ի թիվս այլոց, հանդիսանում են, հայ ժողո-
վրդի պահանջարկության իրավական հիմքը:

ՀՏԴ 941(479.25) : 528

ԳՄԴ 63.3(2Հ) + 26.1

ISBN 978-9939-52-26-47



© Արմեն Խաչիկյան, 2010 թ.

© «Էդիթ Պրինտ», 2010 թ.



ԱՄՆ 28-րդ ՆԱԽԱԳԱՀ ԹՈՍԱՍ ՎՈՒԴՐՈՎ ՎԻԼՍՈՆ
THE 28TH PRESIDENT THOMAS WOODROW WILSON

ՎԵՐԱՊԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅ-ԹՐԻԻԲԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻՏՐ

Երբ 1915 թ. Օսմանյան կայսրությունում տեղի էր ունենում Հայոց մեծ եղեռնը, ԱՄՆ-ը տերություններից միակն էր, որը դեռևս չէր ներառվել Առաջին աշխարհամարտի մեջ և դրա շնորհիվ կարողացավ ոչ միայն բարոյական, այլև նյութական աջակցություն ցուցաբերել տուժող հայ ժողովրդին: ԱՄՆ-ում ինքնաբուխ ստեղծվեցին բարեգործական կազմակերպություններ, որոնք անում էին հնարավորինս հագուստ, մթերք, դեղորայք հավաքելու և տուժող մարդկանց օգնելու համար: Շատ ամերիկացիներ, որոնց թվում՝ դերասաններ, բանաստեղծներ, արվեստագետներ, քաղաքական գործիչներ և այլք, ակտիվորեն ներգրավվեցին այդ օգնության համար ֆինանսական միջոցներ հայթայթելու գործում: Ամերիկացիների մոտ հայ ժողովրդի նկատմամբ համակրանքի մեծ զգացում ձևավորվեց:

1915թ. աշնանը ԱՄՆ արտասահմանյան ներկայացուցչությունների լիազորների խորհուրդը ձևավորեց Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեն, որն սկսեց մասսայական դրամահավաքներ կազմակերպել՝ օգնելու տուժածներին և գաղթականներին: Հետագա 10-12 տարվա ընթացքում ամերիկացիները ավելի քան 30 միլիոն դոլար նվիրաբերեցին հայերին, հույներին և ասորիներին օգնելու գործին: Ամերիկյան օգնությունը մեծապես կարևոր էր հատկապես հայ ժողովրդի համար: 1916-1928 թթ. ընթացքում ԱՄՆ Կոնգրեսը 70-ից ավելի որոշումներ ընդունեց հօգուտ հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության:

ԱՄՆ նախագահ (1913-1921թթ.) Վուդրո Վիլսոնի վարչակազմը, ի գործ ունենալով դադարեցնել կոտորածները, անում էր հնարավորը՝ օգնելու եղեռնից հրաշքով փրկվածներին: 1916թ. տարվա երկու օրը Վիլսոնը հայտարարեց «Մերձավոր Արևելքի օգնության օրեր» և կոչ արեց բոլոր ամերիկացիներին՝ նվիրաբերել ինչ որ կարող են՝ հայերի տուժածներին: Երեւոյնքները քննարկելու համար: Հայ և սիրիացի (ասորիներ,

քրիստոնյա արաբներ, նեստորականներ) գաղթականների համար ավելացվեցին ԱՄՆ ներգաղթելու չափաքանակները՝ սահմանվածից շատ ավելի: Իսկ 1918 թվականից սկսած Վիլսոնի վարչակազմը տուժածներին օգնելու ծրագրերը վերցրեց մասնակի ֆինանսավորման և պետական վերահսկողության տակ: 1919 թ. օգոստոսի 6-ին, ԱՄՆ նախագահի ստորագրած Միավորման ակտով բարեգործական օգնություն տրամադրող բոլոր կազմակերպությունները միավորվեցին որպես «Մերձավոր Արևելքի Օգնություն» (Near East Relief) կազմակերպություն: Անվանի քաղաքական գործիչներ, նախկին նախագահներ, սենատորներ, բանկիրներ, նահանգապետներ և այլք իրենց համաձայնությունը տվեցին ընդգրկվելու որպես այս կազմակերպության խորհրդի անդամներ:

«Մերձավոր Արևելքի Օգնություն»-ը սկսեց գործունեություն իրականացնել մի ընդարձակ տարածաշրջանում՝ Փոքր Ասիայից մինչև Հարավային Կովկաս և Իրաքից մինչև Պաղեստին: Եղեռնից փրկվածներին տեղավորում էին վախժատականների հատուկ կենտրոններում՝ ամերիկյան միսիոներների հովանավորության տակ, որտեղ նրանք կարող էին ոչ միայն սնունդ և օրհան գտնել, այլև ստանալ կրթություն և սովորել որևէ արհեստ՝ ապագայում աշխատանք գտնելու համար: Ամերիկյան որբանոցներ բացվեցին Հունաստանում, Մերձավոր Արևելքի երկրներում և Հայաստանում (Կարս, Ալեքսանդրապոլ, Երևան), որոնք փրկեցին տասնյակ հազարավոր հայ երեխաների կյանքը, ովքեր կորցրել էին իրենց ծնողներին և ընտանիքները պատերազմի ու եղեռնի ընթացքում: Այս բարեգործական օգնությունը ապացույցն էր ամերիկյան հասարակական կարծիքի, և այն նաև որոշակի ազդեցություն էր գործում ԱՄՆ արտաքին քաղաքականության վրա:

Հետագայում ԱՄՆ նախագահ Հերբերթ Հուվերը, ով Վիլսոնի նախագահության տարիներին ծառայում էր որպես հետպատերազմյան Եվրոպայում Ամերիկյան օգնության ֆոնդի վարչության ղեկավար, իր հուշերում ընդգծում է այն ջերմ վերաբերմունքը, որ ամերիկա-

գլխավոր տաժում էին հայ ժողովրդի նկատմամբ. «Ամերիկացի դպրոցականը 1919թ. Հայաստանի մասին գիտեր հավանաբար քիչ պակաս, քան Անգլիայի մասին: Արաբատ լեռան և Նոյի անունների հետ այդ աննկուն քրիստոնյաների առնչությունը, ովքեր պարբերաբար կոտորվում են մահմեդական թուրքերի կողմից, նրանց զրկանքները թեքացնելու համար կիրակնօրյա դպրոցներում հիսուն տարուց ավելի անցկացվող բարեգործական դրամահավաքները, այդ ամենը կուտակվում և Հայաստան անունով իր կնիքն էր թողնում ամերիկացիների մտքերում»:¹

* * *

Վուդրո Վիլսոնը (1856-1924թթ.) ԱՄՆ նախագահներից առաջինն էր, ով կոտրեց «Մոնրոյի դոկտրինի» մեկուսացման քաղաքականությունը, և 1917թ. ապրիլին ԱՄՆ-ը ներքաշվեց Առաջին աշխարհամարտի մեջ: 1918 թ. հունվարի 8-ին Վիլսոնը հանդես եկավ «14 կետերի» իր ծրագրով: Նրա երազանքն էր, որ ամեն մի ազգ ունենա իր երկիրը, և որ մարդիկ իրենք որոշեն, թե ինչպիսի կառավարություն են ցանկանում իրենց երկրում հաստատել:

Վիլսոնը առաջին ամերիկյան ղեկավարն էր, որ կոչեց միջազգային համագործակցության «Ազգերի Լիգայի» միջոցով և դարձավ այդ Լիգայի Համաձայնագրի հեղինակներից մեկը: 1918թ. նոյեմբերի 11-ին, զինադադարի կնքումից հետո, նա անձամբ մեկնեց Փարիզ՝ մասնակցելու հաշտության վեհաժողովին և կարգավորելու հետպատերազմյան աշխարհի խնդիրները:

Վիլսոնը յուրահատուկ պատկերացում ուներ համաշխարհային գործընթացներում ԱՄՆ-ի դերակատարման վերաբերյալ: Այդ պատկերացումները նա պարզորոշ ձևակերպել է իր ելույթներից մեկում. «Հենց նոր ես խոսում էի Միացյալ Նահանգների հոգևոր

առաջնորդության մասին՝ մտքում ունենալով միջազգային հարաբերությունները: Բայց կա մեկ այլ՝ հոգևոր առաջնորդություն ևս, որը բաց է մեզ համար, և որը մենք կարող ենք ստանձնել: Աշխարհն արդեն ապահով է դարձել ժողովրդավարության համար, բայց ժողովրդավարությունը դեռևս վերջնականապես հաստատված չէ: Այդ անվան տակ կատարվում են ամեն տեսակ հանցագործություններ, հանուն դրա սկզբունքների հաստատման և գործադրման տարբեր տեսակի անհավատալի աշլանդակությունների փորձեր են կատարվում: Դա, իմ համոզմամբ, պետք է հանդիսանա Միացյալ Նահանգների ժողովրդավարության մեծագույն արտոնությունը՝ ցույց տալ, որ ինքը կարող է ղեկավարել այս ուղին մեր ժամանակների կարևորագույն սոցիալական և արդյունաբերական պրոբլեմները լուծելու, դեպի երջանիկ, կարգավորված, կայուն կյանքի ուղղորդելու, ինչպես նաև քաղաքական ազատության հասնելու համար: Դրան հասնելու ծրագիրը մենք դեռ նոր պետք է մշակենք, և այն ձևավորելով մենք ավելին կանենք, քան դա հնարավոր կլիներ անել որևէ այլ կերպ՝ ազատվելու համար իշխանության բռնակալական և անօրինական բոլոր այն ձևերից, որոնք ներկայումս հանդես են գալիս ժողովրդի կողմից ընտրված կառավարությունների անվան տակ»¹:

1918 թ. մայիսին, նախկինում Ռուսաստանին պատկանող հայկական տարածքի վրա ստեղծվեց ոչ մեծ Հայաստանի Հանրապետությունը: Նորաստեղծ հանրապետությունը բոլոր կողմերից շրջափակման մեջ էր, լցված տասնյակ հազարավոր փախստականներով, որբերով և համաճարակային հիվանդներով: Չնայած նման ծանր իրավիճակին, հայերը մեծ հույսեր էին կապում նախագահ Վուդրո Վիլսոնի հետ, ակնկալելով, որ նա կպաշտպանի իրենց արդարացի պահանջները:

Փարիզի հաշտության վեհաժողովի ընթացքում Վիլսոնի վարչակազմը, իրոք, լրջորեն տրամադրված էր ստանձնելու Հայաստանի

¹ Herbert Hoover, *Memoirs. Years of Adventure, 1874-1920*, New York, 1951, p.385

¹ Woodrow Wilson, "Great and Solemn Referendum Message", *Public Papers of Woodrow Wilson, War and Peace, II*, p. 453-456.

մանդատը: ԱՄՆ-ում կազմակերպվել էր «հայկական լոբբի»՝ «Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն»: Դրա առաջատար անդամները, որոնց թվում կային և ընդդիմադիր հանրապետական կուսակցության ազդեցիկ սենատորներ, հայտարարում էին իրենց համոզմունքը, որ ամերիկացիները՝ անկախ կուսակցական պատկանելությունից, խորապես հետաքրքրված են հայ ժողովրդի ճակատագրով և ցանկանում են տեսնել Հայաստանի անկախության վերականգնումը:

Հասարակական կարծիքի ազդեցության ներքո նախագահ Վիլսոնը 1919 թ. հուլիսի 11-ին գնդապետ Վիլյամ Հասկեյին նշանակեց Հայաստանում դաշնակից տերությունների գերագույն ներկայացուցիչ: Գեներալ Ջեյմս Հարբորդի 50 հոգուց բաղկացած ամերիկյան փորձագետների փաստահավաք խումբն ուղարկվեց Հայաստան 1919 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Սակայն, ձեռնարկված այս քայլերից բացի, Վուդրո Վիլսոնը վճռական չէր Հայաստանի մանդատն ընդունելու հարցում: Նա համոզված էր, որ ԱՄՆ Սենատը նախ և առաջ պետք է հաստատի Ազգերի լիգայի Համաձայնագիրը, և դրանից հետո միայն կարելի կլինի ընդունել Հայաստանի մանդատը:

Մանդատի ընդունման հարցի քննարկման հետաձգումը ԱՄՆ Կոնգրեսում բախտորոշ եղավ: Մեկուսացման քաղաքականության՝ գնալով աճող տրամադրությունները և միջկուսակցական պայքարը նոր ընտրությունների նախաշեմին անորոշություն մտցրին ամերիկյան հասարակական կարծիքում: Շատ սենատորներ, ովքեր դեմ էին Ազգերի լիգային ԱՄՆ-ի անդամակցելուն, այդպիսով ընդդիմանում էին նաև Հայաստանի մանդատի ընդունմանը, քանի որ այս երկու հարցերը փոխկապակցված էին:

1919 թ. սեպտեմբերի վերջին նախագահ Վիլսոնը ուղևորություններ կատարեց և տարբեր նահանգներում ելույթներ ունեցավ՝ հօգուտ Վերսալի պայմանագրի հաստատման հասարակական կարծիք ձևավորելու: Այս ուղևորության ընթացքում Վիլսոնը կաթված ստացավ՝ դառնալով ֆիզիկապես հաշմանդամ, սակայն պահպանեց մտքի

պարզությունը և կառավարման ունակությունը: Հնարավոր է, որ ծանր առողջական վիճակը նրան հետ պահեց ակտիվ քայլերից, և ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու առաջարկությունը նա Կոնգրեսին ներկայացրեց միայն 1919 թ. վերջին:

1920 թ. հունվարի 23-ին Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ճանաչեցին Անտանտի պետությունները, իսկ նույն թվականի ապրիլի 23-ին Հայաստանի Հանրապետությունը “de-facto” ճանաչեց նաև ԱՄՆ-ը: Սակայն, ոչ դաշնակիցների, ոչ էլ ԱՄՆ-ի կողմից Հայաստանին այդպես էլ կոնկրետ աջակցություն չտրամադրվեց:

1920 թ. ապրիլի 27-ին դաշնակիցների Սան Ռեմոյի կոնֆերանսը դիմեց նախագահ Վիլսոնին՝ առաջարկելով ստանձնել Հայաստանի մանդատը, սահմանագծել Թուրքիայի հետ Հայաստանի արևմտյան սահմանը և հանդես գալ որպես միջնորդ բուրքերի ու հայերի միջև: Վիլսոնը տվեց իր համաձայնությունը այս առաջարկին: Դեռևս հույս կար, որ ԱՄՆ-ը բարեգործական մղումներից ելնելով՝ կարող է ստանձնել Հայաստանի մանդատը: Ի վերջո, երբ արդեն դժվար էր հուսալ դրական եզրակացություն ստանալ, քանի որ մեկուսացման քաղաքականությանը վերադառնալու ձգտումը կրկին լայն տարածում էր ստացել ԱՄՆ-ում, 1920 թ. մայիսի 24-ին նախագահ Վիլսոնը դիմեց Սենատին՝ առաջարկելով ընդունել Հայաստանի մանդատը:

1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ Սենատը քվեարկությամբ մերժեց ընդունել Հայաստանի մանդատը:

1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրվեց Սևրի պայմանագիրը Անտանտի պետությունների և Օսմանյան Թուրքիայի միջև: Դաշնակիցները ճանաչում էին Հայաստանի Հանրապետությունը այն սահմաններում, որոնք Վիլսոնը դեռևս պետք է սահմանագծեր: Դժբախտաբար, պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող կետերը այդպես էլ մնացին թղթի վրա, քանզի Հայաստանի Հանրապետությունը ի վիճակի չէր ոչ միայն իր վերահսկողության տակ առնել հայկական այն տարածքները, որոնք նրան էին տրվում Սևրի դաշնագրով (և որոնք Վիլսոնը դեռևս պետք է սահմանագծեր), այլ անգամ պաշտպանել իր

իշխանության տակ գտնվող տարածքները թուրքերի և բուլղարների ուժեղացող խառնակամքներից:

Անգամ այս պահին նախագահ Վիլսոնը գործադիր իր իշխանությամբ կարող էր պաշտպանել Հայաստանը՝ երկիր ուղարկելով զորք, ռազմական հանդերձանք և կամավորներ՝ հայկական բանակը վարժելու համար: Նման քայլերը ցույց կտային Քեմալական Թուրքիային և բուլղարներին, որ ԱՄՆ-ը չի թողել Հայաստանը բախտի քմահաճությին և միգուցե հետ կպահեին նրանց հանրապետության վրա ուղղակի հարձակումից: Դժբախտաբար, նախագահ Վիլսոնը համոզված էր, որ նման օգնություն կարող է տրամադրվել միայն Կոնգրեսի համաձայնությամբ, ինչի հետևանքով գործնականում ոչինչ չարվեց Հայաստանը պաշտպանելու համար:

Երբ 1920 թ. նոյեմբերի 22-ին Վիլսոնը վերջապես ավարտեց Հայաստանի ապագա քարտեզը սահմանագծելը, թուրքերն արդեն բռնազավթել էին Հայաստանի Հանրապետության արևմտյան կեսը: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի կառավարությունը ստիպված էր համաձայնել Հայաստանի մնացած մասի խորհրդայնացմանը՝ փրկելու իր երկրի մյուս կեսը և բնակչությանը թուրքերի ձեռքն անցնելուց: Սրանով էլ ավարտվեց Հայաստանի անկախությունը:

* * *

Արդ, ինչպե՞ս գնահատենք այն, ինչ կարողացավ անել Վուդրո Վիլսոնը:

Ինչպես դիպուկ նշում է նախագահի կենսագիրներից դոկտոր Չարլզ Մեյմուրը. «Վուդրո Վիլսոնը, ամեն դեպքում, չպետք է գնահատվի իր կատարած գործերի արդյունքներով: Պատմության կողմից նա պետք է արժևորվի ոչ թե որպես գործի մարդ, այլ որպես մարգարե: Հին ժամանակների այլ մարգարեների նման, ինչպիսիք էին Լյուբերը կամ Մաձձինին, նրան տրված չէր գործնականում հաջողության հասցնել այն իդեալները, որոնց նա դավանում էր: Սակայն, դրանով հանդերձ, եզրակացնել, որ նրա կատարածը անհաջողություն էր, կնշանա-

կի թերագնահատել այն իդեալների կարևորությունը, հանուն որոնց նա արքնացրեց ողջ աշխարհը: Իհարկե, (նրա կատարածից) դեռ շատ բան կա, որ անհասկանալի է. կամ էլ անընկալելի է մնում, բայց դրանց արժեքը մարդկության համար միջազգային հարաբերությունների զարգացման տեսանկյունից մնում է անգնահատելի»:¹

Ասվածին ավելացնենք, որ Վուդրո Վիլսոնը կարողացավ կանխատեսել այն, որ հեռանկարում ԱՄՆ-ը պետք է պատասխանատվություն ստանձնի համաշխարհային գործերի նկատմամբ, և Վիլսոնի սկզբունքները ուղենիշ հանդիսացան ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության համար անցած 20-րդ դարի ընթացքում՝ ընդհուպ մինչև մեր օրերը:

Այնուամենայնիվ, մեզ համար ավելի կարևոր է գնահատել այն, թե Վիլսոնը ինչ կարողացավ-չկարողացավ անել Հայաստանի համար: Եվ հենց դա այնքան էլ հեշտ չէ: Անհրաժեշտ է նախ գտնել մի շարք հարցերի պատասխանները.

1. Հնարավո՞ր էր, արդյոք, որ ԱՄՆ Սենատը ընդուներ Հայաստանի մանդատը, եթե նախագահ Վիլսոնը նման առաջարկ աներ այն պահին, երբ բարեգործական տրամադրությունները ամերիկյան հասարակության մեջ դեռ բարձր էին:
2. Եթե նախագահ Վիլսոնը գործադիր իր իշխանությունն օգտագործելով Հայաստան ուղարկեր զորք, զինամթերք և կամավորներ, կարո՞ղ էր դա, արդյոք, կանխել Քեմալական Թուրքիայի և բուլղարների համատեղ հարձակումը Հայաստանի վրա:
3. Եթե Վիլսոնը շատ ավելի վաղ սահմանագծեր Հայաստանի արևմտյան սահմանը Թուրքիայի հետ, ավարտեր իր քարտեզի կազմումը և սկսեր միջնորդություն իրականացնել հայերի և թուրքերի միջև, կարո՞ղ էր այդպիսով պաշտպանել

¹ Charles Seymour, *Woodrow Wilson and the World war*, Yale University Press, 1921, p.359

Հայաստանի Հանրապետությունը և հարկադրել Անտանտի տերություններին՝ զործնականում օգնել Հայաստանին:

Անշուշտ, կան պակաս էական հարցեր ևս, որոնք նույնպես պատասխանի կարիք ունեն: Եվ եթե մենք բախտ ունենանք գտնել այդ հարցերի ճիշտ պատասխանները, դա մեծապես օգտակար կարող է լինել ներկայիս Հայաստանի Հանրապետության համար ևս:

* * *

«Հայաստանի վիլսոնյան քարտեզը» պաշտոնական փաստաթուղթ է՝ ստորագրված Վուդրո Վիլսոնի կողմից և կնքված ԱՄՆ պետական կնիքով: Այն ոչ միայն գծաքարտեզ է, այլև պարունակում է Թուրքիայի և Հայաստանի սահմանագծի ամբողջական նկարագիրը՝ սանտիմետր առ սանտիմետր, ինչպես որ սահմանագծել է ԱՄՆ նախագահը:

«Հայաստանի վիլսոնյան քարտեզ»-ի հրատարակումը օգտակար կարող է լինել մի շարք առումներով.

1. Այն կարելի է օգտագործել որպես պատմական քարտեզ՝ դպրոցում պատմության դասավանդման ընթացքում:
2. Այն կարող է ծառայել հայոց պահանջատիրությունը հիմնավորող ակնառու փաստ՝ հակառակ Թուրքիայի բոլոր հայտարարությունների:
3. Քարտեզի մասսայականացումը կարող է օգնել ԱՄՆ հասարակական կարծիքը առաջ մղելուն և նպաստել Հայոց ցեղասպանությունը ԱՄՆ կողմից պաշտոնապես ճանաչելու հարցում:
4. Այդ ամենից բացի, քարտեզը ակնառու վկայություն է հայամենիկյան երբեմնի սերտ հարաբերությունների վերաբերյալ:

Արմեն Խաչիկյան
պատմ. գիտ. թեկնածու, դոցոնտ

ՍԱՀՄԱՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԻԱՅԻ
ՄԻՋԵՎ

ԻՆՉՊԵՍ ՈՐՈՇԵԼ Է

ՆԱԽԱԳԱՀ ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԸ

Նոյեմբերի 22, 1920 թ.

ՆԱԽԱԳԱՀ ՎԻՍՈՐՆԻ ՆԱՄԱԿԸ

ՆԱԽԱԳԱՀ ՎԻՍՈՐՆԸ

Հաշմակից տերությունների

Գերագույն խորհրդի նախագահին

Պրն նախագահ.

Գերագույն խորհրդի սույն թվականի ապրիլի 26-ի որոշմամբ ինձ փոխանցվեց պաշտոնական առաջարկ՝ որոշելու Թուրքիայի և Հայաստանի նորաստեղծ պետության միջև սահմանների խնդիրը: Մույն թվականի օգոստոսի 10-ին Սևրի պայմանագիրը ստորագրող տերությունների ներկայացուցիչները համաձայնության եկան ինձ լիազորելու այս պատիվը և հայտնեցին իրենց պատրաստակամությունը՝ ընդունելու այն սահմանները, որոնք իմ կողմից կորոշվեն, ինչպես նաև համաձայնագրին ցանկացած այլ հավելում, որոնք ես կառաջարկեմ, որպեսզի Հայաստանը ելք ունենա դեպի ծովը, և ցանկացած միջոցառում՝ այդ կերպ որոշված սահմանի երկարությամբ թուրքական տարածքը ապառազմականացնելու: Սևրի պայմանագրի Մաս III, Բաժին 6, Հոդված 89-ի իրավարար վճռի պայմանների համաձայն՝ ինձ տրված միջնորդային լիազորությունը հստակորեն սահմանափակվում է Թուրքիայի և Հայաստանի միջև Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում սահմանագծմամբ: Ձեր որոշմամբ ինձ վրա դրված պատասխանատվության լիակատար ըմբռնումով ես ձեռնամուխ եղա այս դժվարին գործին, պատրաստակամ ծառայելու հայ ժողովրդի, ինչպես և այս տուժած երկրում դեռևս մնացած բնակիչների շահերին՝ ինչ ազգության կամ ինչ կրոնական հավատքի էլ որ նրանք լինեն, ձգտելով գործադրել հնարավորինս առավելագույն արդարամտություն սահմանամերձ տարածքներում ապրող բնակչության նկատմամբ՝ լինի այն թուրքական, քրդական, հունական, թե հայկական:

Ձեռնամուխ լինելով այս խնդրին, արդեն իսկ պարզ էր, որ որոշում կայացնելու համար բնակչության առկա էթնիկական և կրոնական բաշխվածությունը չորս վիլայեթներում չի կարող դիտարկվել որպես ուղենիշ, ինչպես աշխարհի այլ մասերում: Էթնիկական նկատառումը այս դեպքում, երբ բնակչությունը ի սկզբանե խառն էր տեղաբաշխված, էլ ավելի մշուշոտ է դարձել հայերի և հույների կոտորածների և տեղահանության զարհուրելի հետևանքների, ինչպես և մահմեդական բնակչության մույնքան սարսափելի կորուստների՝ գաղթականների տեղաշարժի, տիֆի համաճարակի ու այլ հիվանդությունների հետևանքով: Իրավարար վճռի սահմանափակումը Հաշտության պայմանագրի Հոդված 89-ում նշված չորս վիլայեթներով կարծես պարտավորեցնում և պարտադրում է, որ հայկական պետությանը այս վիլայեթների սահմաններում տրվի հնարավորինս լայն տարածք, միևնույն ժամանակ, նորաստեղծ պետության համար ապահովելով համարժեք բնական սահմանի և աշխարհագրական ու տնտեսական ամբողջականության պահանջները: Անհրաժեշտ է մտքում ունենալ, որ Հայաստանի նորաստեղծ պետությունը, որն, անշուշտ, ներառելու է նաև նախկին Ռուսաստանի անդրկովկասյան հայկական մարզերի մի մեծ բաժինը, սկզբից ևեթ գրեթե հավասարապես կիսված մահմեդական ու քրիստոնեական և տարբեր ազգային ու ցեղային պատկանելության բնակչություն կունենա: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ըստ լեզվի և կրոնի կազմված կլինեն թուրքերից, քրդերից, հույներից, ղզլբաշներից, լազերից և ուրիշներից, ինչպես և հայերից: Իմ միջնորդային որոշմանը համձնված սահմաններում հայերի, թուրքերի, քրդերի և հույների՝ իրար հակասող տարածքային ակնկալիքները ոչ միշտ է հնարավոր իրար հետ ներդաշնակեցնել: Նման դեպքերում, իմ համոզմամբ, որոշիչ պետք է հանդիսանա ապագա Հայաստանի պետության առողջ տնտեսական կյանքի խնդիրը: Ինչևէ, այնտեղ, ուր ճշգրիտ աշխարհագրական սահմանի պահանջները հնարավորություն են տալիս, սահմանի երկայնքով ձգվող բոլոր լեռներն ու հովիտները, որոնք առավելապես քրդական կամ թուրքական են, ավելի շուտ թողն-

վել են Թուրքիային, քան տրվել են Հայաստանին, եթե միայն շուկայական կապերը կոնկրետ քաղաքների հետ չեն պարտադրել դրանք տալ Հայաստանի պետությանը: Բոլոր այն դեպքերում, երբ ցեղային կապերի և սեզոնային տեղաշարժերի վերաբերյալ մատչելի տեղեկատվություն կար, փորձ է արվել հարգել և պահպանել ցեղային միավորումների ամբողջականությունը և քոչվոր անասնապահների տեղաշարժը:

Կոտուր քաղաքից հարավ-արևմուտք Պարսկաստանի սահմանը Հայաստանի հետ որոշված է խիստ բարձր բնական ժայռոտ սահմանագծով, որը ձգվում է Վանա լճից հարավ և գտնվում է հայկական Բիթլիս և Մուշ քաղաքներից հարավ-արևմուտք: Այս սահմանագիծը որպես Թուրքական պետության մաս է թողնում ողջ Հաքքյարի սանջակը կամ Վանի վիլայեթի մոտավորապես կեսը, ինչպես և ողջ Սաիրթ սանջակը: Ֆիզիկա-աշխարհագրական այս հիմնավոր փաստարկը, որը կարծես արդարացնում է սույն որոշումը, ավելի է ամրապնդվում ազգագրական նկատառումներով, քանի որ Հաքքյարն ու Սաիրթը՝ ըստ բնակչության և տնտեսական հարաբերությունների, առավելապես քրդական են: Հայկական պետության շահերից չի բխում և նրա կազմում Մեծ Ջաբ գետի վերին հովիտը ընդգրկելը, որի բնակչությունը առավելապես քրդեր և նեստորական քրիստոնյաներ են, ինչպես և թուրքական Քրդստանի ու Միջագետքի համար կենսական գործոն հանդիսացող Մեծ Տիգրիս գետի ոռոգման համակարգը: Այս ակունքների վերահսկողությունը, որքանով հնարավոր է, պետք է պահվի երկու շահագրգիռ պետությունների՝ Թուրքիայի և Միջագետքի կազմում: Նույն այս նկատառումներով հայկական պահանջը Մեծ Ջաբի վերին հովտի նկատմամբ չի կարող բավարարվել:

Սահմանագիծը Բիթլիսից արևմուտք և Մուշից հյուսիս, դեպի Երզնիցանի տարածաշրջանը, ընկնում է Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների մեջ: Այն անցնում է բնական աշխարհագրական սահմանագծով, որը ապահովում է Հայաստանին կատարյալ անվտանգություն և

Թուրքական պետությանն է թողնում մի տարածք, որը լիովին քրդական է: Այս մասում հայկական գյուղերը և ավանները, ինչպես օրինակ՝ Կիդին և Թեմրանը, անհրաժեշտաբար մնում են Թուրքիային՝ առևտրական և կրոնական ամուր կապերի պատճառով, որոնք նրանց ավելի շատ կապում են Խարպուտի, քան Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների հայկական շուկայական կամ կրոնական որևէ կենտրոնի հետ: Այսպիսի որոշումը անխուսափելի հետևանքն է այն բանի, որ Խարպուտ քաղաքը և շրջանը, համաձայն Սևրի պայմանագրի Հոդված 27-ի II կետի (4) և Հոդված 89-ի, ընդգրկվել են Թուրքական պետության կազմի մեջ:

Գերսիմի հյուսիսային եզրագծից սահմանի որոշման բնույթը և ուղղությունը ուղղակիորեն կախված են Հայաստանի պետության մատակարարման և դրա համար դեպի ծով ելք ունենալու կենսական խնդրի հետ: Իմ դատողությամբ, այս հիմնախնդրի ճիշտ լուծումից կախված է ողջ բնակչության՝ թուրքական, քրդական, հունական, հայկական կամ եզդիական, ապագա տնտեսական բարգավաճումը Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների այն մասերում, որոնք ընկնում են Հայկական պետության մեջ: Ես անտարբեր չեմ պոնտացի հույների ցանկությանը, որն ինձ փոխանցվել է հուշագրով, և որն անկասկած իր փաստարկներով և բովանդակությամբ համապատասխանում է Գերագույն խորհրդի անցած մարտ ամսի Լոնդոնի կոնֆերանսին ներկայացվածին, որ իրենցով բնակեցված Սև ծովի առափնյա տարածաշրջանը առանձնացվի, և որ միջոցներ ձեռնարկվեն ինքնավար վարչակազմ ստեղծելու Ռիզայից մինչև Սիմոպից արևմուտք գտնվող կետը ձգվող տարածաշրջանում: Սևրի պայմանագրի Հոդված 89-ով ինձ տրված միջնորդային իրավասությունը չի ներառում անկախության նրանց ակնկալիքների կամ դրա անհնարինության դեպքում՝ ինքնավարության խնդրի որոշման կամ առաջարկության հնարավորություն իմ կողմից: Ոչ էլ այն իրավունք է տալիս գործ ունենալ անկախ Ջանիկ սանջակի կամ Կաստամունի վիլայեթի առափնյա տարածքի հետ, որի

մեջ մտնում է պոնտական հույների կողմից ակնկալվող վարչական միավորի և ինքնավարության տարածաշրջանը:

Իմ առջև երեք հնարավոր ուղի կար. այնպես գծել սահմանը, որ Տրապիզոնի վիլայեթն ամբողջովին մնար Թուրքիայի կազմում, այն ամբողջովին շնորհել Հայաստանին կամ դրա մի մասը տալ Հայաստանին և մնացածը բոլորել Թուրքիային: Տրապիզոնի վիլայեթի բնակչության մեծամասնությունը, անկասկած, մահմեդական է և հայկական տարրը, համաձայն մախապատերազմական բոլոր վկայությունների, անուրանալիորեն քրիստոնեական փոքրամասնություն կազմող հունական մասից էլ բվով փոքրաթիվ էր: Ազգագրական առումով այսքան ակնհայտ հիմնավորմանը հակակշռում է Հայաստանի ապագան: Ես կարող եմ հարցը դիտարկել միայն քաղաքական նոր միավորի՝ մահմեդական և քրիստոնեական խառը բնակչությամբ Հայաստանի կարիքների լույսի ներքո, քան թե որպես միայն հայերի ապագայի խնդիր: Դա եղել է և հիմա էլ իմ հարաճուն համոզմունքն է, որ Հայաստանին դեպի ծովը ելք տրամադրելուն ուղղված քայլերը պետք է լինեն այնպիսիք, որ ամեն հնարավորություն տան այս պետության զարգացման համար՝ որպես ունակ վերականգնելու և իրականացնելու համաշխարհային առևտրում այն օգտակար դերակատարումը՝ որ նրա աշխարհագրական դիրքը, պատմական առևտրական մեծ ուղու վրա գտնվելը, տրված են եղել նրան անցյալում: Նրա խառը բնակչության քաղաքակրթվածությունը և երջանկությունը մեծապես կախված կլինեն երկաթուղիների կառուցումից և եվրոպական առևտրի ու մշակութային ազդեցությունների համար երեք վիլայեթների տարածքի հարաճուն մատչելիությունից:

Տրապիզոնի մավահանգստից դեպի արևելք՝ Լազիստանի ծովափի երկայնքով ոչ մի համարժեք մավահանգստային հարմարություններ հնարավոր չէ գտնել, և Պոնտական լեռների ժայռոտ բնույթը, որոնք Լազիստանի սանջակը բաժանում են Էրզրումի վիլայեթից, այնպիսին է, որ մեկուսացնում է ներքին շրջանները ծովափից այնպես, որ երկաթուղու կառուցումը գործնականում կասկածելի է: Գոյություն

ունեցող քարավանային առևտրական ուղին՝ Պարսկաստանից է անցնում զետի և Էրզրումի սարահարթերի վրայով, որն անցնում է Բաղրադը և Գումուշխանա քաղաքներով և դուրս է գալիս դեպի Սև ծովը Տրապիզոնում, մեծ օգտակարության տեղական պատմություն ունի:

Ահա սրանք էին այն նկատառումները, որոնք ստիպեցին ինձ վերադառնալ իմ սկզբնական որոշմանը, որ Տրապիզոն քաղաքը և մավահանգիստը պետք է Հայաստանի մասը կազմեն:

Քանի որ Քարշուտ հովտով անցնող ուղին, որն ավարտվում է Տիրեբոլի քաղաքում ու առավել նպատակահարմար է երկաթուղի կառուցելու և գործարկելու առումով, ես անհրաժեշտ համարեցի նաև այս հովիտը ներառել Հայաստանի մեջ, դրանից արևմուտք ընկած բավարար տարածքով հանդերձ, դրա անհրաժեշտ պաշտպանությունը երաշխավորելու համար: Ես անտեղյակ չեմ, որ հայկական պատվիրակությունների ղեկավարներն իրենց պատրաստակամությունն են հայտնել հրաժարվելու Տրապիզոնի վիլայեթի այն մասի նկատմամբ պահանջից, որն ընկնում է Մուրմենայից դեպի արևմուտք: Գնահատելով նրանց ցանկությունը՝ հրաժարվելու այդ առավելապես մահմեդական տարածքի նկատմամբ իշխանությունից, ես վստահ եմ, որ ընդառաջելով նրանց պատրաստակամությանը՝ արդարամիտ լինելու բուրքերի և հույների պահանջի նկատմամբ Տրապիզոնում, ես անուղղելի սխալ արած կլինեի Հայաստան երկրի ապագայի և նրա ողջ բնակչության նկատմամբ, որոնք դրա մասն են կազմելու:

Ահա այս հիմնավորմամբ է, պրն. Նախագահ, որ սահմանները գծված են այնպես, որ հետևեն լեռնաշղթային Երզինջան քաղաքից դեպի արևմուտք՝ դեպի Պոնտական լեռները, ապա այստեղից դեպի Սև ծովը այնպես, որպեսզի Ջեֆիո Բեյ կոչվող ծովածոցը ընդգրկվի Հայաստանի մեջ: Տրապիզոնի սանջակի մավահանգստային քաղաքներ Կերասունտը և Օրդուն Թուրքիային բողնելու որոշումը թելադրված էր այն փաստով, որ այս շրջանի բնակչությունը հիմնականում մահմեդական և բուրք է, և որ այս քաղաքները բուրքական Միվաս վիլայեթի արևելյան ելքն են հանդիսանում: Էրզրումի և Տրապիզոնի վի-

լայերների այն մասերը, որոնք այս սահմանագծման արդյունքում մնում են բուրբական, քան թե տրվում են Հայաստանին, կազմում են մոտավորապես 12,120 քառակուսի կիլոմետր:

Հայաստանի սահմանին հարող բուրբական տարածքի ապառազմականացման կապակցությամբ, ինչը վերևում ընդարձակ ներկայացվեց, ապառազմականացված գոտի ստեղծելը թվում է երկուստեք ոչ գործնական և ոչ անհրաժեշտ, քանի որ կապահանջի հրահանգներ մշակել և դրանց իրականացման համար ամբողջական գործակալություններ ստեղծել: Բարեբախտաբար, Սևրի պայմանագրի հոդված 177-ը ամրագրում է Թուրքիայի գոյություն ունեցող բոլոր ամրոցների զինաթափում: Հոդվածներ 159-ը և 196-200-ը պարտադրում են (ստեղծել) հանձնաժողովներ, որոնք լիովին համապատասխանում են անկարգության բոլոր վտանգներին դիմակայելու, որպիսիք կարող են առաջանալ սահմանի երկայնքով, ընդ որում՝ առաջին (հոդված)-ը պահանջում է, որ ոստիկանության սպաները համաձայնորեն տրամադրվեն տարբեր դաշնակից կամ չեզոք ուժերի կողմից, իսկ հաջորդ (հոդված)ները, պահանջում են ստեղծել Հսկողության և կազմակերպչական միջ-դաշնակցային ռազմական հանձնաժողով: Այս պայմաններում միակ լրացուցիչ հանձնարարականը, որն անհրաժեշտ և օգտակար է թվում, այն է, որ Հսկողության և կազմակերպչական միջ-դաշնակցային ռազմական հանձնաժողովը պետք է (Սևրի) պայմանագրի հոդված 200-ով իր վրա դրված իրավասություններին համապատասխան ընտրի ոստիկանության ավագ սպաների, այն սպաների թվից, որոնք (Սևրի) պայմանագրի հոդված 159-ի համաձայն հատուկ կառաջադրվեն դաշնակից կամ չեզոք ուժերի կողմից, և որոնք կտեղակայվեն Թուրքիայի և Հայաստանի սահմաններին հարող վիլայեթներում, և որ այդ սպաները օժտված կլինեն հատուկ պարտականությամբ՝ կանխարգելելու Հայաստանի սահմանի դեմ ուղղված ռազմական նախապատրաստությունները Հսկողության և կազմակերպչական միջ-դաշնակցային ռազմական հանձնաժողովի ղեկավարության ներքո:

Իմ վստահ ակնկալիքն է, որ հայ փախստականները և նրանց ղեկավարները, իրենց տրամադրված տարածք վերադարձի ընթացքում, ձեռնպահ կմնան որևիցե և ամեն տեսակ վրեժխնդրությունից՝ աշխարհին բարոյական մեծ քաջության օրինակ տալով, ինչը պետք է ընդհանրապես ազգային հզորության հիմքը հանդիսանա: Աշխարհն ակնկալում է, որ նրանք ամեն կերպ կխրախուսեն և ուժերի ներածին չափով կօգնեն այն բուրբ փախստականներին, ովքեր կցանկանան վերադառնալ իրենց նախկին տները Տրապիզոնի, Էրզրումի, Վանի և Բիթլիսի շրջաններում, հիշելով, որ այդ մարդիկ ևս մեծապես տուժել են: Իմ մյուս ակնկալիքն է, որ նրանք մույնօրինակ բարյացակամ վերաբերմունք կդրսևորեն Սև ծովի առափնյա շրջանի լազ և հույն բնակչության նկատմամբ, անհրաժեշտության դեպքում վարչական հարցերում լինելով առավել գիշողամիտ ոչ հայ ազգային և կրոնական խմբերի նկատմամբ՝ որոնք ներառված են ազգային փոքրամասնությունների հետ սույն թվականի օգոստոսի 10-ին իրենց կողմից ստորագրված պայմանագրում, որպեսզի այս մարդիկ ուրախությամբ և պատրաստակամորեն լիակատար ներդաշնակությամբ աշխատեն հայերի հետ՝ վստահորեն դնելով Հայաստանի նոր Հանրապետության հիմքը:

Սույնով պատիվ ունեմ ներկայացնելու իմ որոշման տեքստը:
Ընդունեք հարգանյացս հավաստիքը (այլն).

ՎՈՒԴԲՈ ՎԻԼՍՈՆ

Վաշինգտոն, 22 նոյեմբերի, 1920թ.

ՆԱԽԱԳԱՀ ՎԻԼՍՈՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի՝ դեպի ծով ելք ունենալու և Հայաստանի սահմանին հարող թուրքական պարածրի ապստամբականացման վերաբերյալ

Միացյալ Նահանգների նախագահ ՎՈՒԴԲՈՎ ՎԻԼՍՈՆԸ
ԲՈԼՈՐԻՆ, ՈՒՄՈՐ ԴԱ ԿՎԵՐԱԲԵՐԻ,
ՈՂՋՈՒՆՈՒՄԷ.

Նկատի ունենալով, որ 1920 թ. ապրիլի 26-ին դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը Սան Ռեմոյի կոնֆերանսի ժամանակ առաջարկությունով դիմեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահին՝ հանդես գալու որպես իրավարար Թուրքիայի և Հայաստանի միջև, չորս վիլայեթներում՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի սահմանների խնդիրը որոշելու համար.

Նկատի ունենալով նաև, որ 1920 թ. մայիսի 17-ին այս առաջարկությունն ընդունելու մասին իմ համաձայնությունը հեռագրվեց ամերիկյան դեսպանին՝ Փարիզում՝ Գերագույն խորհրդում ներկայացված տերություններին փոխանցելու համար.

Նկատի ունենալով նաև, որ 1920 թ. օգոստոսի 10-ին լիազոր ներկայացուցիչների կողմից Սևրում հաշտության պայմանագիր ստորագրվեց Բրիտանական Կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի ու Ճապոնիայի և Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի ու Չեխոսլովակիայի՝ մի կողմից և Թուրքիայի միջև մյուս կողմից, որ այդ պայմանագիրը ի թիվս այլ դրույթների պարունակում էր հետևյալը.

«ՀՈԴՎԱԾ 89: Թուրքիան և Հայաստանը, ինչպես և մյուս Բարձր պայմանավորվող կողմերը համաձայն են Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի իրավարար որոշմանը հանձնել Թուրքիայի և Հայաստանի միջև Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում սահմանի որոշման խնդիրը և ընդունել նրա որոշումը այս

հարցի վերաբերյալ, ինչպես նաև համաձայնագրին ցանկացած հավելումներ, որոնք նա կառաջարկի, որպեսզի Հայաստանը ելք ունենա դեպի ծովը և որպեսզի հիշյալ սահմանի երկարությամբ թուրքական հարակից տարածքը ապստամբականացվի»:

Նկատի ունենալով նաև, որ 1920 թ. հոկտեմբերի 18-ին Խաղաղության վեհաժողովի Գլխավոր քարտուղարությունը՝ գործելով դաշնակից տերությունների հանձնարարությամբ, Փարիզում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան միջոցով ինձ փոխանցեց վերը նշված պայմանագրի հաստատված օրինակը՝ ուշադրություն հրավիրելով նշված Հոդված 89-ին,

Ըստ այդմ, Թ. Վուդրո Վիլսոնը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը, ում վրա որ այսպիսով դրվել էր իրավարար առաքելությունը, քննելով խնդիրը առավել մատչելի հավաստի տեղեկատվության լույսի ներքո և արդարության բարձրագույն շահերից գործելու մտադրությամբ, սույնով հայտարարում է հետևյալ որոշումը.

I

Սահմանը Թուրքիայի և Հայաստանի միջև Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում պետք է նշագծվի հետևյալ կերպ.

1. Սկզբնակետ* պետք է ընտրվի Թուրքիայի և Պարսկաստանի սահմանագծին Վանի վիլայեթի՝ Հաքյարի և Վան սանջակների վարչական սահմանի հատման արևելյան ծայրակետը, ինչպես որ այդ վարչական սահմանը նշված է թուրքական քարտեզի Բաշկալա էջի

* Իմ կարծիքն է, որ այս սկզբնակետը պետք է գտնվի նախկին թուրք-պարսկական սահմանի վրա, ինչպես դա նշված է Սևրի պայմանագրի Հոդված 27 II (4)-ում, սակայն հիշյալ սահմանի 40 մղոնը, որոնց մեջ ներառված է հայկական սահմանի սկզբնակետը, դժարակացված չի եղել 1914 թ. թուրք-պարսկական սահմանագծող հանձնաժողովի կողմից: Առաջարկվող նոր սկզբնակետը ընկած է մուրավորապես 1 կիլոմետր դեպի հարավ Կարա Հիսաս գյուղից և մուրավորապես 25 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք Կուրուր գյուղից, և կարող է նշագծվել գերմի վրա այս կետի մոտ այնպես, ինչպես որ կորոշի սահմանագծող հանձնաժողովը, պայմանով, որ այն գրանցվի և Վան-Հաքյարի սանջակների Պարսկաստանի սահմանի հետ հստակ կետում:

վրա՝ մասշտաբը՝ 1:200,000, որը հրատարակվել է Թուրքիայի 1330-1331թթ. (1914-1915 թթ.) ֆինանսական տարում: Այս սկզբնականից սահմանը պետք է շարունակվի հարավ-արևմուտք՝ դեպի Մերկեդեր Դաղի արևմտյան գագաթը, որը տեղակայված է 6 կիլոմետր արևմուտք 3350 մետր (10,990 ոտնաչափ) բարձունքից, մոտ 2 կիլոմետր հարավ-արևմուտք Յոկարի Ահվալան գյուղից և մոտավորապես 76 կիլոմետր դեպի հարավ-արևելք Վան քաղաքից:

Վերոնշյալ սանջակների սահմանները, այնուհետև վարչական սահմանը Մամուրեթ-ուլ-Համիդ և Էլբաք դազաների միջև, ապա վերոնշյալ նույն սանջակի սահմանները թարմացված են այնտեղ, ուր անհրաժեշտ է, որ դրանք հետևեն հիմնական ջրբաժանին Ջաբ Սուի (Մեծ Ջաբ գետ) և Խոշաբ Սուի միջև և հավասար մասերի են բաժանում Քրդես Գեղիկի և Չոխ Գեղիկի միջև եղած բարձր լեռնանցքները,

այդտեղից հյուսիս-արևմուտք՝ մոտ 28 կիլոմետր դեպի Կեսիլի Դաղ, գետնին սահմանագիծ պետք է նշվի՝ որը կհետևի հիմնական ջրբաժաններին Խոշաբ Սուի և դեպի Շատակ Սու թավովող գետակների միջև և կշրջանցի Յոկարի Ահվալան գյուղից հարավ ընկած լեռնանցքը և կանցնի Շկոլանս Դաղի (3100 մետր կամ 10,170 ոտնաչափ) ու Բելերշուկի միջև լեռնանցքով,

այդտեղից հարավ-արևմուտք՝ դեպի անանուն գետակի Շատակ Սուի հետ միախառնման վայրը՝ Շատակ գյուղից մոտ 10 կիլոմետր դեպի հարավ:

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջրբաժաններին և կանցնի Կոհ Կիրան Դաղլար, Սարի Դաղ (3150 մետր կամ 10,335 ոտնաչափ), Կեմետալա Թեփե (3,500 մետր կամ 11,480 ոտնաչափ, 3,540 մետր (11,615 ոտնաչափ) գագաթը) այնպես, որ Հայաստանին թողնվի Էյրեթի գյուղը, իսկ Թուրքիային՝ Արազ գյուղը և որպեսզի կտրի անցնի Շատակ Սու գետը Դիր Մուեմ Քիլիսա գյուղից առնվազն 2 կիլոմետր դեպի հարավ,

այդտեղից արևմուտք՝ դեպի այն գետը, որը հոսում է Մոկս Սուին, որը տեղակայված է Մոկս գյուղից դեպի հարավ,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջրբաժաններին, Հայաստանին թողնելով Կաչեթ, Սինփաս և Օզիմ գյուղերը, անցնելով Կանիսոր Թեփեով (3,245 մետր կամ 10,645 ոտնաչափ), անանուն լեռնագագաթը մոտ 3 կիլոմետր Առնուս Դաղից (3,550 մետր կամ 11,645 ոտնաչափ), կտրել անցնելով անանուն գետակը մոտ 2 կիլոմետր Սինփաս գյուղից դեպի հարավ, անցնելով 3,000 մետր (9,840 ոտնաչափ) բարձունքով, հետևելով Վան և Բիթլիս վիլայեթների սահմանագծին մոտ 3 կիլոմետր այս կետից դեպի հարավ-արևմուտք և շարունակելով հարավ-արևմուտք նույն լեռնաշղթայով դեպի անանուն լեռնագագաթը՝ Մոկս Սուից 2 կիլոմետր դեպի արևելք, և ապա իջնելով դեպի այս գետը,

այդտեղից հյուսիս՝ դեպի Վան և Բիթլիս վիլայեթների սահմանագծին գտնվող անանուն լեռնագագաթը, որը Մատա Գեղիկ լեռնանցքից մոտ 3 կիլոմետր արևմուտք է,

Վան և Բիթլիս վիլայեթների միջև վարչական սահմանը, որը վերանայվել է Վանկին Դաղից (3,200 մետր կամ 10,500 ոտնաչափ) դեպի հարավ՝ հետևելու հիմնական ջրբաժանին, այդտեղից արևմուտք դեպի Մեյդան Չենիդյանի լեռնագագաթը, որը տեղակայված է Բիթլիս և Սաիրթ սանջակների սահմանագծին՝ Բիթլիս քաղաքից մոտավորապես 29 կիլոմետր դեպի հարավ,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջրբաժաններին՝ անցնելով Վերերիան Դաղով (3,110 մետր կամ 10,200 ոտնաչափ), կտրել անցնելով Քեսան Դերեն մոտ 2 կիլոմետր Խորոս գյուղից դեպի հարավ, թողնելով Թուրքիային Մեմիաջ և Նևալեյն գյուղերը, ինչպես և նրանց միջև գտնվող կամուրջը կամ գետանցը և Հայաստանին թողնելով Չոպանս գյուղը և հյուսիս-արևելքից դեպի այն տանող ճանապարհը,

այդտեղից արևմուտք՝ դեպի Կյուլսլ Բելո Սու, այն վտար, որ գտնվում է Բիթլիս քաղաքից 23 կիլոմետր դեպի հարավ և մոտ 2 կիլոմետր դեպի հարավ Նուրի Սեր լեռնագագաթից (2,150 մետր կամ 7,050 ոտնաչափ),

Բիթլիս և Մաիրթ սանջակների միջև վարչական սահմանով, ապա գետնի վրա սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջր-բաժաններին և կանցնի Քուր Դաղի 2,750 և 2,700 մետր (համապատասխանաբար՝ 9,020 և 8,860 ոտնաչափ) գագաթներով, Բիլուկի Դաղ (2,230 մետր կամ 7,315 ոտնաչափ) և Սիհասեր Թեփե (2,250 մետր կամ 7,380 ոտնաչափ) գագաթներով;

այդտեղից արևմուտք՝ դեպի Բիթլիս Սուի և անանուն գետակի միախառնման վայրը, Դեշթում գյուղի մոտակայքում, մոտ 30 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք Բիթլիս քաղաքից,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջր-բաժաններին՝ թողնելով Թուրքիային Լերեդ և Դարունի գյուղերը, իսկ Հայաստանին՝ Էմբու գյուղը և բոլոր ճանապարհները, որոնք տանում են Մերգելու լեռից (1,850 մետր կամ 6,070 ոտնաչափ) հյուսիս-արևելք՝ դեպի Բիթլիս Սու, և կտրում անցնում են Մերգելու Թեփե ու Շիխ Թաքուր լեռնաշղթաները,

այդտեղից արևմուտք՝ դեպի Ջուկ (Դարգան) Սու այն կետը, որը 11 կիլոմետր հյուսիս-արևմուտք է Հագո գյուղից և Ջիլու գյուղից մոտավորապես 1 կիլոմետր հոսանքն ի վեր,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջր-բաժաններին՝ Հայաստանին թողնելով Դեշթումի գյուղը, անցնելով Կալմեն Դաղի արևելյան գագաթով (2,710 մետր կամ 8,890 ոտնաչափ) և շարունակվելով այնպես, որպեսզի Հայաստանին թողնվի սարահարթը (dolina) կամ ներքին ջրահեռացման ավազանը, հակառակ կողմում Ավեսիպի գյուղից մոտ 3 կիլոմետր դեպի արևմուտք գտնվող լեռնանցքը, որն անցնում է Շելաշ դաղով (1,944 մետր կամ 6,380 ոտնաչափ),

այդտեղից արևմուտք դեպի Մասուն Դերե, այն կետը, որը Քաբիլ Ջևիզ գյուղից մոտ 4 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք է և մոտավորապես 47 կիլոմետր դեպի հարավ է Մուշ քաղաքից,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջր-բաժաններին Չեյարդաշ լեռան (2,001 մետր կամ 6,565 ոտնաչափ), Կեպեկա լեռան (1,931 մետր կամ 6,335 ոտնաչափ), Մասուն Դաղի անանուն գագաթը՝ մոտ 4 կիլոմետր Մալաթո դաղից (2,967 մետր կամ 9,735 ոտնաչափ) դեպի հարավ-արևմուտք, 2,229 (7,310 ոտնաչափ) բարձունքը, Թուրքիային թողնելով Գունդենու գյուղը,

այդտեղից հյուսիս-արևելք՝ դեպի Թալուրի Դերե, այն կետը, որը գտնվում է Կասսեր գյուղից 2 կիլոմետր հոսանքն ի վեր և Մեյլևան (Ֆարկին) գյուղից մոտավորապես 37 կիլոմետր (դեպի) հյուսիս-արևելք,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջր-բաժաններին և կանցնի անանուն գագաթով՝ Մեյլուկ գյուղից մոտ 2 կիլոմետր (դեպի) արևելք, ու 2,073 (6,800 ոտնաչափ) բարձունքով, Հայաստանին թողնելով Հեյշթիրեն գյուղը,

այդտեղից հյուսիս-արևմուտք՝ դեպի Թալուրի Դերեի արևմտյան վտակը, Հեյլմ գյուղից մոտ 2 կիլոմետր դեպի արևելք և Մուշ քաղաքից մոտավորապես 42 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք գտնվող կետը,

գետնին պետք է սահմանագիծ նշվի, որը կհետևի հիմնական ջր-բաժաններին և կանցնի 2,251 (7,385 ոտնաչափ) բարձունքով,

այդտեղից հյուսիս-արևմուտք՝ դեպի Կուլպ Բողազի (Կուլպ Սու) և Ասկար Դերեի խառնման վայրը, Մուշ քաղաքից մոտավորապես 42 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջր-բաժաններին՝ Թուրքիային թողնելով Հեյլն գյուղը, իսկ Հայաստանին՝ Կեհիրվանիք գյուղը,

այդտեղից հյուսիս-արևմուտք՝ դեպի Գենջ և Մուշ սանջակների վարչական սահմանի վրա գտնվող կետը՝ Միր Իսմայիլ Դաղից հյուսիս-արևելք, որը տեղակայված է Փեյկեոզ գյուղից 5 կիլոմետր դեպի արևմուտք և Արդուշին գյուղից մոտավորապես 19 կիլոմետր դեպի հարավ,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջր-բաժաններին և կանցնի Կոմիս Դաղով,

այդտեղից հյուսիս-արևմուտք՝ դեպի Ֆրաթ Նեիրի (Մուրադ Սու կամ Եփրատ), այն կետը, որը կորոշվի գետնի վրա Դոմ գյուղից մոտ 1 կիլոմետր հոսանքն ի վեր և Մուշ քաղաքից մոտավորապես 56 կիլոմետր դեպի արևմուտք,

Գենջ և Մուշ սանջակների միջև վարչական սահմանը և դեպի հյուսիս մոտ 2 կիլոմետր, ապա գետնին վրա սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջրբաժաններին դեպի արևմուտք՝ անանուն գագաթը, Չուքելայից (Արչե Կարա) Դադ (2,940 մետր կամ 9,645 ոտնաչափ), մոտավորապես 6 կիլոմետր դեպի արևելք, ապա դեպի հյուսիս անցնելով Արշիկ Դադի վրա գտնվող Հադիջե Թեփեի միջով, թողնելով Թուրքիային Քուլայ գյուղը և Հայաստանին՝ Քուհուրան գյուղը,

այդտեղից հյուսիս-արևմուտք՝ դեպի Գունիկ Սու, այն կետը, որը այս գետի երկու գետանցների միջև է, Էլմալի ու Չենաքջի գյուղերի միջև ճանապարհի գրեթե կեսին, և Չոլիկ (Չնեյիկ) գյուղից մոտավորապես 26 կիլոմետր դեպի հյուսիս,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջրբաժաններին՝ անցնելով անանուն գագաթով՝ Շանդար գյուղից մոտ 2 կիլոմետր դեպի արևմուտք, Մոլխան Դադի երկայնքով, և 2,200 մետրի (7,220 ոտնաչափ) վրա գտնվող բարձունքով՝ Թուրքիային թողնելով Շանդար և Չենակջի գյուղերը և Հայաստանին՝ Կումիստան, Լիճինակ և Էլմալի գյուղերը,

այդտեղից հյուսիս-արևմուտք՝ դեպի Էրզրումի և Բիթլիսի վիլայեթների սահմանին գտնվող անանուն գագաթը, այն կետին մոտ, ուր Էրչեկ և Ադա Կեի գյուղերի միջև անցկացված ուղիղ գիծը հատում է նշված վիլայեթների սահմանագիծը,

գետնին սահմանագիծ պետք է նշվի որը կհետևի հիմնական ջրբաժաններին՝ անցնելով 2,050 մետր (6,725 ոտնաչափ) բարձունքով,

այդտեղից հյուսիս դեպի հիշյալ վիլայեթի սահմանագծին գտնվող անանուն գագաթը, որը Խորիս Դադի Քարտալիկ Թեփեից 8 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք է,

Էրզրումի և Բիթլիսի վիլայեթների վարչական սահմանագծով, այդտեղից արևմուտք՝ դեպի Բույուկ Սու (Կիդի Սու) 2 կիլոմետր հոսանքն ի վեր Դաբգու Դերեի հետ նրա խառնման կետից, և Բիդի գյուղից մոտավորապես 11 կիլոմետր հյուսիս-արևմուտք,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի Շեյթան Դադլարի հիմնական ջրբաժաններին, անցնելով 2,610 մետր (8565 ոտնաչափ) բարձունքով, Շեյթան Դադով (2,906 մետր կամ 9,535 ոտնաչափ), Հաքստուն Դադով, Հայաստանին թողնելով Դինեկ գյուղը և նրանից հարավ-արևմուտք գտնվող գետանցը կամ կամուրջը,

այդտեղից արևմուտք՝ դեպի Դար Բողազ (Կուտու Դերե) այն կետը, որը մոտ 3 կիլոմետր հարավ-արևմուտք է Չարդաքլար (Փալումոր) գյուղից,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջրբաժաններին, Հայաստանին թողնելով Շորախ և Ֆերիադին գյուղերը, անցնելով Դաբարթի Դադով (2,550 մետր կամ 8,365 ոտնաչափ), Սիան Դադով (2,750 մետր կամ 9,020 ոտնաչափ), 2,150 մետր բարձրության վրա գտնվող լեռնանցքով Մուստաֆա Բեյ Կոնադի մոտով անցնող Փալումոր Կիդի ճանապարհով, Ֆեզիրա Թեփե (2,530 մետր կամ 8,300 ոտնաչափ), 2,244 մ (7,360 ոտնաչափ) և 2,035 մ (6,675 ոտնաչափ) բարձունքներով,

այդտեղից արևմուտք՝ դեպի Երզինջան և Էրզրում սանջակների և Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթի ընդհանուր սահմանը, որը տեղակայված է սուր անկյան տակ վիլայեթի սահմաններում, մոտավորապես 24 կիլոմետր դեպի արևմուտք Փալումոր գյուղից և 32 կիլոմետր հարավ-արևմուտք Երզինջան քաղաքից,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջրբաժաններին և կանցնի դեպի հյուսիս-արևմուտք անանուն գագաթով, մոտ 2 կիլոմետր հարավ-արևմուտք Փալումորից, Սիլուս (Կեոսինոդ) Դադով (2,405 մետր կամ 7,890 ոտնաչափ) դեպի Երզինջանի սանջակի հարավային սահմանագծին գտնվող անանուն գագաթը, մոտ 8 կիլոմետր հարավ-արևմուտք Փալումոր-Երզինջան ճանապարհից, ապա

քերվելով դեպի հարավ-արևմուտք սանջակի սահմանագծի երկայնքով մոտ 13 կիլոմետր, անցնելով Քարաջա Քալեհի (3,100 մետր կամ 10,170 ոտնաչափ) միջով,

ապա արևմուտք՝ դեպի Էրզրում և Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթների սահմանագծին գտնվող անանուն գագաթը, որը գտնվում է Մոնգուր Սիլսիլեսիի ճանապարհի վրայի լեռնանցքից մոտ 3 կիլոմետր հյուսիս-արևմուտք, Եփրատի ափին տեղակայված Կեննախի և Դերսիմ (սանջակի) Փելուրի միջև, Երզնջան քաղաքից մոտավորապես 40 կիլոմետր դեպի հարավ-արևելք գտնվող գագաթը,

Էրզրումի և Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթների միջև վարչական սահմանը քարմաքված է*, քանի որ սահմանագծման հանձնաժողովի քվե ունեցող անդամների մեծ մասը գերադասեց հետևել լեռնաշղթայի երկայնքով ձգվող հիմնական ջրբաժանին՝ Մերջան Դաղլարից (3,449 մետր կամ 11,315 ոտնաչափ) մոտ 2 կիլոմետր հարավ-արևմուտք գտնվող անանուն գագաթի և Կատար Թեփեի (3,300 մետր կամ 10,825 ոտնաչափ) միջև,

այդտեղից հյուսիս՝ դեպի Ֆրաթ Նեիրի (Կարա Սու կամ Եփրատ), մինչև այն կետը, որը կորոշվի գետնի վրա Քենաղ գյուղից մոտ

* Նշված վայրում վիլայեթի սահմանագիծը (համաշայն քուրբական Գլխավոր շրաքի քարտեզի Խոզաթ-Դերսիմ էջի, մաշկաբեր՝ 1:200000) իջնում է Մոնգուր-Սիլսիլեսիի հյուսիսային լանջով մոտ 7 կիլոմետր: Միացման վայրը՝ Երզնջանի դազայի սահմանագծի և Էրզրումի վիլայեթի Երզնջան սանջակի Կեննախ դազայի միջև ու Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթի Դերսիմի սանջակի հետ, ընկած է Եփրատ գետից 14 կիլոմետրի սահմաններում: Սա Թուրքիային է թողնում ռազմական նշանակություն ունեցող մի պլացդարմ 11,000 ուրնաչափ քարշրոթյաւք լեռնաշղթայից հյուսիս և Երզնջան քաղաքից ընդամենը 20 կիլոմետր հարավ: Ես լիազորված չեմ այս կետում փոփոխելու վարչական սահմանը, և այս 40 քառակուսի կիլոմետրը դուրս է այն չորս վիլայեթների փարածքից, որը որոշված է Սևրի պայմանագրի հոդված 89-ով:

Այնուամենայնիվ, ես համարձակություն եմ վերցնում հրավիրելու սահմանագծման հանձնաժողովի ուշադրությունը, որ ցանկալի կլինի րեղական քնակշորյան հետ խորհրդակցել այս կետում վիլայեթի սահմանների հնարավոր փերամայման առումով:

6 կիլոմետր դեպի արևելք և Երզնջան քաղաքից մոտավորապես 35 կիլոմետր (դեպի) հարավ-արևմուտք,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջրբաժաններին, Թուրքիային թողնելով ճանապարհը Դերսիմի Փելուրից դեպի Եփրատի վրա գտնվող Կեննախ և Հայաստանին թողնելով Կոջա Արբլեր գյուղը,

այդտեղից հյուսիս՝ դեպի Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների սահմանագիծը այն կետում, որը կորոշվի 2,930 մ (8,625 ոտնաչափ) գագաթից մոտ 1 կիլոմետր դեպի արևմուտք և Մետկուտ գյուղից մոտ 4 կիլոմետր դեպի հարավ կամ Երզնջան քաղաքից մոտավորապես 39 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետևի հիմնական ջրբաժաններին՝ Թուրքիային թողնելով Չաղի Յաղի, Թոմս ու Ալամիկ գյուղերը և Հայաստանին՝ Երկղան գյուղը և Մելկուք գյուղից հարավ անցնող ճանապարհն ու ուղեայունը, անցնելով Ուրջ Քարդաշ Թեփեով, Կելեկ Կիրանով (Թեքե Թաշ, 2,800 մետր կամ 9,185 ոտնաչափ), Կեհնամ Դաղով (կամ Կարա Դաղ, 3,030 մետր կամ 9,940 ոտնաչափ), հավասարապես կիսելով Ջազկեր գյուղից մոտ 2 կիլոմետր արևմուտք ընկած լեռնանցքը Հայաստանի և Թուրքիայի միջև, և նմանապես Կրալ Խամ Բողազի ճանապարհի լեռնանցքը Չարդակի գյուղի մոտ, անցնելով Կարա Դաղի 2760 մետր (9,055 ոտնաչափ) բարձունքով, 2,740 մետր (8,990 ոտնաչափ) բարձունքով, և այն կետով, որը պետք է նշվի գետնի վրա, Իքի Սիվրի գետակի մոտ՝ Չիմեն Դաղ լեռնանցքից դեպի արևմուտք 2 կիլոմետրից էլ պակաս, և դա պետք է արվի այնպես, որ Թուրքիային թողնվի դեպի արևմուտք՝ Կուճի Կևի ու Կարա Յայրակ տանող երկու ճանապարհների խաչմերուկը և Հայաստանին՝ երկու այլ ճանապարհների խաչմերուկը, որոնք տանում են դեպի Մետկուտ և Կիրմանա գյուղերը: Սահմանագծող հանձնաժողովը տեղում կորոշի 2,760 մետր և 2,740 մետր բարձունքների միջև անցնող մայրուղու առավել հարմար դիրքը,

այդտեղից հյուսիս-արևմուտք՝ դեպի Կելկիտ Չայ (Կելկիտ Իր-մակ), այն կետը, ուր հարավից դրան է հանդիպում Տրապիզոնի և Սիվասի վիլայեթների միջև սահմանագիծը,

Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթների միջև վարչական սահմանը և այդտեղից դեպի Տրապիզոնի և Սիվասի վիլայեթների միջև վարչական սահմանը,

այդտեղից հյուսիս՝ դեպի Տրապիզոնի և Սիվասի վիլայեթների սահմանի վրա գտնվող անանուն գագաթը՝ Բորդա Փայայից (2,995 մետր կամ 9,825 ոտնաչափ) մոտ 4 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք, որը գտնվում է Գյումուշ-Խանա քաղաքից մոտավորապես 38 կիլոմետր (դեպի) հարավ-արևմուտք,

գետնի վրա սահմանագիծ պետք է նշվի, հետևելով հիմնական ջրբաժաններին, Հայաստանին թողնելով Հալկիթ, Սինանլի, Կիլիկտին, և Կիրտանոս գյուղերը և Թուրքիային՝ Կար Կիշլա, Մադիկ, Կարա Կիա և Արա գյուղերը, կտրել անցնելով լեռնանցքը Շիրան Չայի արևմտյան վտակների և Բարսակ Դերեյի (Կարա Չայ) արևելյան ակունքների միջև, Կարահիսար Շարկի (Շապին Կարահիսար) քաղաքից մոտ 43 կիլոմետր դեպի արևելք,

այդտեղից հյուսիս-արևելք, հյուսիս և արևմուտք՝ դեպի Տրապիզոնի և Սիվասի վիլայեթների սահմանին գտնվող անանուն գագաթը, որը տեղակայված է մոտ 7 կիլոմետր հյուսիս-արևմուտք Յերչի Թեփեից (2,690 մետր կամ 8,825 ոտնաչափ) և 47 կիլոմետր հարավ, հարավ-արևմուտք Կերասունտ քաղաքից,

Տրապիզոնի և Սիվասի վիլայեթների վարչական սահմանագիծը,

այդտեղից դեպի հյուսիս, վերը նշված կետից Պոնտական լեռների գագաթներով դեպի Սև ծովը, այն կետը ծովափին, որը պետք է որոշվի Քեշաբ գյուղից մոտ 1 կիլոմետր դեպի արևմուտք և Կերասունտ քաղաքից մոտավորապես 9 կիլոմետր դեպի արևելք,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, հետևելով հիմնական ջրբաժաններին, Թուրքիային թողնելով դաշտերը, արոտավայրերը և գյուղերը Կոմիս Դերեի (Ակ Սու) և նրա վտակների ոռոգման տարածքում և

Հայաստանին՝ դաշտերը, արոտավայրերը, անտառները և գյուղերը Յաղաջ Դերեի (Լսպիյա Դերե) և Վենազի Դերեի (Քեշաբ Դերե) ու նրանց վտակների ոռոգման տարածքում, և անցկացվի այնպես, որ օգտագործվի սահմանը Տրիպոլի (Տիրեբոլի) և Կերասունտ դազանների միջև՝ ընդամենը 7 կիլոմետր Կարա Թեփեից (1,696 մետր կամ 5,565 ոտնաչափ) հարավ, և որպեսզի առավել հարմար կապ ապահովվի նոր սահմանի և լեռնաշղթայով անցնող լեռնանցքների միջև, ինչպես որ այդ կապերը կարող են որոշվել տեղում, սահմանագծող հանձնաժողովի կողմից՝ տեղական բնակչության հետ խորհրդակցելուց հետո:

2. Որևէ տարածայնությունների դեպքում սույն որոշման տեքստի և կցված քարտեզների միջև՝ մասշտաբը 1:1,000,000 և 1:200,000, տեքստը կհամարվի գերակա:

Սևրի պայմանագրի Հոդված 89-ով որոշված չորս վիլայեթների տարածքը սահմանված է ըստ 29 հոկտեմբերի 1914 թ. դրությամբ,

Սահմանը, ինչպես վերը նկարագրվեց, այն գծված է կարմիր գույնով, ճշգրտված քարտեզի վրա՝ մասշտաբը 1:1,000,000, որը կցված է սույն սահմանի որոշմանը: Այստեղ հիշատակված բոլոր աշխարհագրական անունները ներկայացված են սույն տեքստին կցված քարտեզների վրա:

Տեղանքի աշխարհագրական կետերի անվանումների, լեռների բարձրության, և վիլայեթների, սանջակների ու դազանների սահմանների որոշման համար որպես հիմք ծառայել են թուրքական Գլխավոր շտաբի քարտեզները՝ մասշտաբը 1:200,000, և մասնակիորեն՝ բրիտանական քարտեզը՝ մասշտաբը 1:1,000,000:

1:200,000 մասշտաբի քարտեզները երաշխավորելի են Հոդված 91-ով նախատեսված սահմանագծող հանձնաժողովի կողմից օգտագործելու համար՝ սույն որոշմամբ հաստատված Հայաստանի սահմանները գետնի վրա նշագծելու համար:

II

Վերը նկարագրված սահմանը, որով Տրապիզոնի նավահանգիստը և Խալշուտ Սուի հովիտը հատկացվում են Հայաստանին, վերացնում

է Հայաստանի համար հետագայում դեպի ծով ելք նախատեսելու անհրաժեշտությունը:

III

Ի լրումն սպառազինությունների սահմանափակման այն հիմնական երաշխիքների, որոնք ներառված են Սևրի պայմանագրի V բաժնում՝ Ռազմական, ծովային և օդային հարցեր, Հայաստանի սահմանի, ինչպես այն հաստատվեց վերևում, հարակից թուրքական տարածքի ապառազմականացումը, պետք է իրականացվի հետևյալ կերպ.

Հսկողության և կազմակերպչական միջ-դաշնակցային ռազմական հանձնաժողովը, որի ստեղծումը նախատեսված է Սևրի պայմանագրի հոդվածներ 196-200-ով, Թուրքիայի՝ Հայաստանի սահմաններին հարակից վիլայեթներում տեղակայված ռստիկանության ավագ սպաներին պետք է նշանակի բացառապես այն սպաների թվից, որոնք հիշյալ պայմանագրի Հոդված 159-ի համաձայն կառաջադրվեն Դաշնակից կամ Չեզոք ուժերի կողմից:

Այդ սպաները, ի հավելումն իրենց մյուս պարտականությունների, օժտված կլինեն հատուկ պարտականությամբ՝ հետևելու և զեկուցելու Հսկողության և կազմակերպչական միջ-դաշնակցային ռազմական հանձնաժողովին Թուրքիայի այս վիլայեթներում բոլոր այն միտումների նպատակների մասին, որոնք ուղղված կլինեն Հայաստանի սահմանի դեմ, այն է՝ ռազմավարական երկաթուղիների և ավտոճանապարհների կառուցում, ռազմամթերքի պահեստների ստեղծում, ռազմակայանների հիմնում, ինչպես նաև հարևան Հայաստանի տարածքի խաղաղությանն ու հանգստությանը սպառնացող քարոզչության ծավալում: Հսկողության և կազմակերպչական միջ-դաշնակցային ռազմական հանձնաժողովը այդժամ պետք է այնպիսի քայլեր ձեռնարկի, որպիսիք անհրաժեշտ կլինեն կանխարգելելու վերը բնորոշված ուժերի կենտրոնացումը և ալլ ագրեսիվ գործողությունները:

Ի վկայություն առ այն, որ սա ես կազմել եմ իմ ջեռքով, կհավաստի այսպիսի դրոշմված Միացյալ Նահանգների կնիքը:

Կատարված է երկու օրինակից Վաշինգտոն քաղաքում, հազար իննը հարյուր քսան քվականի նոյեմբեր ամսի քսաներկուսին և Միացյալ Նահանգների անկախության հարյուր քառասունհինգ քվականին:

(Կնիքը)

Նախագահ.

ՎՈՒԴԲՈ ՎԻԼՍՈՆ

ԲԵՅՆԲԻՋ ԲՈԼԲԻ

Պետական քարտուղար

Թարգմանությունը կատարված է ըստ հետևյալ հրատարակության

Publie a l'occasion du cinquantenaire de la signature de la Traite de
Sevres (10 Aout 1920)

EDITION HAMASKAINE

Association Culturelle Armenienne

LIBRAIRIE HAMASKAÏ'NE

WILSON AND THE ARMENIAN-TURKISH FRONTIER

